ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1991-2008 ԹԹ.)

ՄԱՏԻՆՅԱՆ Լ. Վ., ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Մ.

Նախկին Խորհրդային Միության 100-ից ավելի ազգերի, ազգությունների կյանքում վերջին ավելի քան քառորդդարյա ժամանակաշրջանում կատարվել և կատարվում են արմատական փոփոխություններ: Միութենական նախկին 15 հանրապետությունները հռչակել են իրենց անկախությունը, փաստացի կայացել, և գործում են մի շարք չճանաչված և մասնակի ճանաչված պետություններ: Նրանց միջև ձևավորվել են միանգամայն նոր փոխհարաբերություններ: Այլևս չկա անխախտ, ամենահզոր հռչակված՝ աշխարհում առաջին բազմազգ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: ԽՍՀՄ-ի նման արագ փլուզումը ապացույցն էր, թե որքան շինծու էին ժողովուրդների այդքան թմբկահարվող բարեկամությունը, ինտերնացիոնալիզմը: Արդի պատմությունը, դրա սթափ, օբյեկտիվ գնահատումը ցույց են տալիս, թե որքան հակասություններ և տարբեր շահեր ունեին և ունեն տարբեր հանրապետությունները, ազգերը և ժողովուրդները: Ինչ խոսք, այդ հակասությունները, տարբեր շահերը, նույնիսկ արդեն միմյանց նկատմամբ տածած թշնամանքը, պատերազմի հասնող և հասած իրավիճակը միանգամից չէ, որ ստեղծվել էր: Դա առաջացել էր պատմական ժամանակաշրջանում, որին նպաստել էին ամբողջատիրական համակարգը, և, որ շատ կարևոր է, երկար տասնամյակներ իշխած գաղափարախոսությունը:

Եվ վերջապես, բոլոր ազգերի, ազգությունների միջև առաջացած այս հակասությունները հիմնականում արդյունք են այն բանի, որ շատ հարցերի նման ազգամիջյան հարաբերություններին վերաբերող հարցերը ևս լուծվել են անարդարացիորեն, հաշվի չեն առնվել տվյալ ազգի, ժողովրդի ցանկությունները, նրա պատմությունը և անցյալը: Այլ խոսքով՝ գերիշխել է կամայականությունը, վերևից հրահանգավորումը, թելադրանքը, բոլորին միանման տեսնելու և մոտենալու ցանկությունը: Եվ քանի որ նման մոտեցումն անարդարացի էր, ապա պետք է առաջանային ազգերի և հանրապետությունների միջև թշնամանք, անվստահություն, հակակրանք և այլ հակասություններ, սակայն այլակարծության իսպառ բացակայության, մեղմ ասած՝ ոչ ժողովրդավարական պայմաններում այդ թշնա-մանքը, հակասությունները չէին կարող բացահայտ երևալ, իսկ ազգերն էլ, առավել ևս նրանց կոմունիստական ղեկավարները չէին կարող այդ մասին բարձրաձայնել: Եվ այսպես, տասնամյակների ընթացքում կուտակվեցին ազգային չլուծված այնքան հիմնախնդիրներ, հարցեր, որոնք չէին կարող

լուծվել նախկին հավասարների միություն հռչակված երկրում: Կյանքը ցույց տվեց, որ ազգերի ինքնորոշման կարգախոսը սոսկ նպատակ ուներ նախկին ցարական Ռուսաստանի, ժողովուրդների բանտ կոչվող երկրում բոլոր ազգերին հանել ցարիզմի դեմ, տապալել այն, կատարել սոցիալիստական հեղաշրջում և ազգերին հռչակել որպես համերաշխության, հավասարության, ռուս մեծ եղբոր անշահախնդիր օգնության պայմաններում ապրող ազգեր:

Այսինքն՝ կոմունիստական գաղափարախոսության գլխավոր սկզբունքներից մեկը դարձավ ԽՍՀՄ բոլոր ազգերին, ժողովուրդներին հրամցնել այն գաղափարը, որ ո՛չ մի ազգ, ո՛չ մի ժողովուրդ չի կարող ինքնուրույն գոյատևել, եթե չլինի մեկ միության մեջ: Իսկ եթե դրան հավելենք նաև այն, որ հանրապետությունների միջև սահմանները համարվում էին լոկ պայմանական, ոչ էական, իսկ առանձին դեպքերում էլ սահմանների կամայական վերանայումը, մեկից մյուսին տալը՝ սովորական (իհարկե, միայն Կենտրոնի ցանկությամբ), ապա պարզ կլինի, թե որքան չլուծված և անարդարացի հարցեր էին կուտակվել անխախտ և միասնական թվացող Խորհրդային Միությունում:

Իսկ պատմությունը փաստում է, որ պետք է գար այդ ամենի վերջը կամ ավելի ճիշտ՝ նախկին համակարգի քայքայման սկիզբը, այսինքն՝ նաև արդարության հաստատման համար պայքարը, ավելի որոշակի՝ սկսվելու էր ազգային պետությունների ստեղծման գործընթացը:

Աշխարհի շատ երկրներում ազգային պետությունների ստեղծումն ուղեկցվել է կայսրությունների քայքայումով և ազգամիջյան պատերազմներով:

Մեր ժողովրդի պատմությունը Խորհրդային Միության տասնյակ ժողովուրդների հետ այլ կերպ է ընթացել: Նրանք և հայ ժողովուրդը ևս նվաճվել են ավելի հզոր ռուսական պետության կողմից, որը, ի դեպ, պատմագիտության կողմից մինչև վերջերս գնահատվել է որպես ազատագրում: Իհարկե, նման ազատագրումը ավելի շատ նման էր չարյաց փոքրագույնին: Հայ ժողովուրդը, ինչպես նաև ամեն մի ժողովուրդ կնախընտրեր ունենալ իր ինքնուրույն, ինքնիշխան պետությունը, սակայն պատմական հանգամանքները այնպես են դասավորվել, որ նա XIX դարի առաջին կեսին, այն էլ մի մասով՝ Արևելյան Հայաստանով, հայտնվել էր Ռուսաստանի կազմում: Եվ երևի բնական է, որ հայ ժողովրդի արևելյան հատվածի կյանքն ընթացել է այն համակարգում և ենթարկվել այն օրենքներին, որոնք տիրապետող են եղել ցարական Ռուսաստանում: Ինչ խոսք, այդ համակարգը ներառել էր և՛ տնտեսությունը, և՛ քաղաքականությունը, և՛ հասարակական միտքը, և՛ հոգևոր կյանքը: Անշուշտ, տասնամյակները, հարյուրամյակները չէին կարող անհետևանք լինել և չազդել հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման վրա: Այն սերտորեն կապված էր ռուսական հասարակական-քաղաքական մտքի, հեղափոխական խմորումների հետ, և պատահական

չէ, որ Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումն իր հետևանքներով ծնեց նոր սոցիալ-ժողովրդավարական, ազգային-ժողովրդավարական, ազգային-ազատագրական շարժում և դրանց համապատասխան գաղափարախոսություններ, կուսակցություններ: Ամենաազդեցիկը XIX դարի վերջին և XX դարի սկզբին դարձավ մարքսիստական գաղափարախոսությունը, իսկ նրա կրողը դարձան պրոլետարիատը և գյուղացիները: Այդ գաղափարախոսության կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ առաջին պլանի վրա էր դրվում պատմության զարգացման, նրա առաջընթացը պայմանավորող դասակարգային պայքարի գործոնը: Ընդունելով ազգային-ազատագրական շարժումը՝ մարքս-լենինյան տեսությունը դա ենթարկում էր ըստ այդ հայեցակետի՝ ավելի ճիշտ, ավելի մարդասիրական գաղափարների, որ ազգային-ազատագրական շարժումը սոսկ մի փուլ է կապիտալիզմի դեմ պայքարում ավելի գլխավոր և հեռավոր նպատակին՝ սոցիալիզմին հասնելու համար:

Դժվար չէ կռահել, որ նման աշխարհընկալումը պետք է մեկ ազգը բաժաներ տարբեր շահեր, նպատակներ ունեցող մարդկանց խմբերի, դասերի, խավերի և ավելի մեծ չափով՝ դասակարգերի:

Եվ իրոք, պատմության նման ըմբռնումը հանգեցրեց պատմությունը ներկայացնելու իբրև դասակարգային պայքարի պատմություն, հետևաբար՝ ոչ թե մեկ ազգն է մյուսի դեմ պայքարում, այլ մեկ ազգի ներսում տարբեր դասակարգեր, խավեր են միմյանց դեմ ելնում: Այսինքն՝ մերժվեց, անտեսվեց հասարակության և ընդհանրապես մարդկության աստիճանական, առանց ցնցումների և արյունահեղության, բարեփոխումներով զարգանալու հնարավորությունը: Ստեղծվեց թշնամու կերպար թե՛ ազգի ներսում և թե՛ նրանից դուրս: Հասկանալի է, որ նման գաղափարախոսության նյութականացումը աշխատավոր զանգվածների շրջանում կնշանակեր նրանց տրամադրել իշխանությունների դեմ:

Եվ իրոք, այդ գաղափարախոսությունն իր գործը կատարեց հատկապես Ռուսաստանում. 1917 թ. կատարվեց շրջադարձային նշանակություն ունեցող երկու իրադարձություն՝ փետրվարին տապալվեց ցարիզմը, իսկ հոկտեմբերին՝ բուրժուազիան: Երկրում հաստատվեց պրոլետարիատի դիկտատուրա:

Եվ քանի որ Հայաստանը (Արևելյան Հայաստանը) Ռուսաստանի կազմում էր 1828 թվականից, ապա այստեղ ևս աստիճանաբար, այսինքն՝ մինչև 1920 թ. նոյեմբերի վերջերը կատարվեցին այն փոփոխությունները, որոնք կատարվում էին Ռուսաստանում՝ անգամ կանգ չառնելով բուրժուադեմոկրատական վերափոխումների փուլի, շրջանակների սահմաններում: Աշխարհի 1/6-րդ մասում փոփոխությունների նման արագ իրականացումը բացատրվում է նրանով, որ բոլշևիկները բազմամիլիոն զանգվածներին խոստացան լուծել ամենակենսական հարցերը՝ հողի հարցը, քաղաքական իրավունքների ազատությունը, ժողովրդավարական կարգերի հաստատու-

մը, անհատի ազատությունը, սոցիալական արդարությունը, հաշտությունը, ազգերի ազատությունը, ինքնորոշումը և այլն:

Ազգամիջյան հիմնախնդիրների տեսանկյունից շատ կարևոր է քննել, թե ինչպես լուծվեցին այդ հարցերը, իրականում ինչպիսի ինքնորոշում, ազատություն ստացան կայսրությունում ապրող տասնյակ ազգեր: Չմանրամասնելով նշենք, որ 1918-1920 թթ. քաղաքացիական պատերազմը, օտարերկրյա ռազմական ինտերվենցիան մյուս հանգամանքների հետ ստեղծեցին այն ընդհանուր մթնոլորտը, որ նախկին ցարական Ռուսաստանի կազմում անհավասար պայմաններում հայտնված ազգերը այժմ կարող էին կազմել հավասարների միություն: Այսպես 1922 թ. ստեղծվեց բազմազգ Խորհրդային Միությունը: Սակայն հենց սկզբից նշենք, որ թե՛ մինչև Խորհրդային Միության կազմվելը և թե՛ կազմվելուց հետո շատ ազգերի և հատկապես մեր ժողովրդին վիճակված էին մեծ անարդարություններ: 1921 թ. մարտի 16-ին ռուս-թուրքական պայմանագրով Նախիջևանը անարդարացիորեն, առանց պատմության հետ հաշվի նստելու, առանց հանրաքվեի հանձնեցին Ադրբեջանին[1], իսկ նույն թվականի հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշմամբ Ադրբեջանին հանձնվեց նաև մյուս պատմական հայկական տարածքը՝ Արցախը[2]: Հասկանալի է, որ նման անարդարությունը չէր կարող անհետևանք մնալ և չազդել հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա:

Չէ՞ որ ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը կարող են արդարացիորեն հարց տալ. իսկ ո՞ւր մնացին ազգերի ինքնորոշման իրավունքի մասին բոլշևիկների խոստումները, ընդ որում, ինքնորոշված՝ ընդհուպ ինքնիշխան պետություն կազմելը:

Եվ ահա այս և շատ այլ հարցերում հընթացս խորացան բոլշևիկների խոսքի և գործի տարբերությունները: Ազգայինի մասին խոսելը, ազգային առանձնահատկությունները ներկայացնելը, ազգի պատմության, ազգային-ազատագրական շարժումների մասին գրելը կենտրոնը մեկնաբանում էր որպես ազգայնականություն, ազգայնամոլություն, ժողովուրդների բարեկամությանը վնասող երևույթ և այլն: Սակայն այդ վիճակը անվերջ չէին կարող հանդուրժել ազգերը, ժողովուրդները, որքան էլ որ տիրապետող լիներ վարչահրամայական համակարգը: Եվ նախկին Միությունում սկսված վերակառուցումը աստիճանաբար ժողովուրդներին, բոլոր ազգերին, հանրապետություններին ավելի տեսանելի դարձրեց ազգային հարցում չլուծված հիմնահարցերը, առկա անարդարությունները: Ցավոք, միութենական

---

[1] Տե՛ս Պայմանագիր 1921 թ. մարտի 16-ի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև; Կարսի պայմանագիր 1921 թ. հոկտեմբերի 13-ի, Ե., 1991; Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010:

[2] Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Ե., 1991, էջ 169-170; Хуршудян Л. А. Истина–единственный критерий исторической науки, Е., 1989, с. 36-42; ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1, ց. 87, գ. 18, թ. 157:

կառավարությունը խորամուխ չեղավ այդ հարցի մեջ, չփորձեց նոր տեսանկյունով, հայեցակետով նայել այդ բարդ և նաև շատ նուրբ հարցին: Եվ որովհետև երկար տարիներ ոտնահարված էին շատ ազգերի, ազգությունների ինքնասիրությունը, արժանապատվությունը, իրավունքները, երկրում սկսվեց մի նոր շարժում, որի էությունը ազգային հարցի արդարացի լուծումն էր, մանավանդ որ վերակառուցման կարգախոսներից մեկը բոլոր հարցերին պատմական ճշմարտության դիրքերից մոտեցումն էր և սոցիալական արդարության վերականգնումը: Եվ հենց դրանով պետք է բացատրել Լեռնային Ղարաբաղում (Արցախ) պատմական արդարության վերականգնման համար սկսված ազգային-ազատագրական շարժումը:

Այո, անշուշտ, Արցախյան շարժումը ազգային-ազատագրական շարժում էր, որի նպատակը մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետությանը միավորվելն էր, ազգերի ինքնորոշման և մարդու իրավունքների ճանաչումը:

Սակայն 1988 թ. սկսված Արցախյան շարժումը, որը զգալիորեն նպաստեց երկրի այլ տարածաշրջաններում նմանատիպ հարցերի առաջացմանը, հանդիպեց նախկին կենտրոնի՝ Մոսկվայի կարծրատիպով, իներցիայով եկած, ամբողջատիրական կարգերին հատուկ կոպիտ մերժմանը, սովորական դարձած նացիոնալիզմին, ազգայնամոլությանը, ծայրահեղությանը տուրք տալու մեղադրանքներին՝ "Վերակառուցումը վերաձևում չէ" կարգախոսով, ստատուս քվոն ամեն գնով պահպանելու գործելաոճով:

Այստեղ հաշվի չէր առնվում մի հանգամանք, որն ավելի վաղ նկատել էր ակադեմիկոս Բ.Ն. Տոպորնին. Խորհրդային Միությունը այն ձևով, որպիսին որ նա ձևավորվել էր նախորդ տասնամյակների ընթացքում, չէր բավարարում նրա մեջ մտնող հանրապետություններին: Ձևավորվել էր մի յուրօրինակ դիմակայության կարծրա տիպ, երբ Միությունը դիտարկվում էր ոչ թե որպես իր մեջ մտնող բաղկացուցիչ մասերը՝ հանրապետությունները միավորող, ինտեգրող և նրանց շահերն արտահայտող մարմին, այլ ավելի շատ ինչ-որ օտար մի ուժ, որը կտրված էր սուբյեկտներից իր անչափ կենտրոնացված, մեծ բյուրոկրատական ապարատով[3]:

Հավանաբար, բոլորս էլ պատմությունից լավ գիտենք, որ բռնությունը ծնում է հակադարձ բռնություն, դիմադրությունը՝ հակադարձ դիմադրություն: Եվ այսպես՝ նախկին Կենտրոնի մեղքով, հատկապես նոր քաղաքականությունը մշակող Մ. Ս. Գորբաչովի և նրա խորհրդականների մեղքով, որն անընդհատ հանրապետություններին սպառնում էր, որ եթե ազգերը բաժանվեն ըստ ազգային պատկանելության, կսկսվի արյունահեղություն, կարծես թե հուշում էր իրոք արյունահեղության գնալու միտքը: Եվ երբ

[3] Տե՛ս Топорнин Б.Н. *Новый Союзный договор: теоретические подходы (Новый Союзный договор: трудные поиски решений, М., 1990, с. 9):* Վերցված է՝ Шинкарецкая Г.Г. *Содружество независимых государств (правовые основы деятельности), М., 2006, с. 3:*

առանձին տեղերում գործը հասավ թե՛ արյունահեղության և թե՛ նույնիսկ ցեղասպանության՝ Սումգայիթ, Կիրովաբադ (Գյանջա), Բաքու և այլն, նախկին Միության ղեկավարությունը, Կենտկոմի Գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը չշտապեցին քաղաքական գնահատական տալ այդ վանդալիզմին, ամենայն խստությամբ, օրենքի ուժով պատժել այդ հանցագործության մասնակիցներին և, որ կարևոր է, նրա կազմակերպիչներին. չշտապեցին երկրով մեկ դատապարտել XX դարի վերջի ցեղասպանությունը, ստեղծել անհանդուրժող մթնոլորտ: Չկազմակերպեցին համընդհանուր պայքար նման երևույթի դեմ՝ դրանով թույլ տալով թողտվություն: Եվ նման անճարակությունը, անիշխանությունը և թողտվությունը ձևավորեցին անպատիժ մնալու կարծրատիպ: Երկրով մեկ սկսվեցին ազգամիջյան ընդհարումներ, ջարդեր, պատերազմներ:

Եվ եթե փորձենք մի փոքր ավելի մեծ մասշտաբով դիտարկել, անընդհատ, ամեն օր չհիշեցնել Սումգայիթը և հայ-ադրբեջանական ամենօրյա կռիվները, ընդհարումները, հակամարտությունները, փորձելով դրանք համարել սոսկ երկու ազգերի, ժողովուրդների ներքին գործ, միևնույն է, այդ կոնֆլիկտը դուրս է գալիս ազգամիջյան նեղ շրջանակից և ստանում միջազգային բնույթ: Այսօր արդեն առկա են Ռուսաստանի Դաշնության ազգամիջյան բախումները: Չեչենների պայքարով Ռուսաստանի պատմության մեջ սկսվել է մի նոր, բավական բարդ, անկանխատեսելի հետևանքներով հղի ժամանակաշրջան: Փաստ է, որ տասնյակ միլիոնավոր ռուսներ ապրում են նախկին Միության տարբեր հանրապետություններում և Ռուսաստանի տարբեր ինքնավարություններում: Փաստ է նաև, որ 50-60 միլիոն մուսուլման ապրում է նախկին Միության հանրապետություններում և ինքնավար հանրապետություններում, մարզերում, երկրի տարբեր քաղաքներում, շրջաններում: Ժամանակին այդ հարցերը առավել մեծ ակտիվությամբ քննարկվել և քննարկվում են հայ պատմագիտության մեջ, հրատարակվում են տարբեր կարգի աշխատանքներ, ուսումնասիրություններ: Բազմաթիվ են այն հեղինակները, պետական, քաղաքական գործիչները, որոնք դատապարտել և դատապարտում են Ադրբեջանի ամենօրյա հակահայկական գործողությունները՝ սկսած 1988 թ. փետրվարի սումգայիթյան իրադարձություններից մինչև Բաքվի, Կիրովաբադի, Խանլարի, Դաշքեսանի հայաբնակ այլ վայրերի հայկական ջարդերը, 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմը և այլն: Հատկանշական են Բագրատ Ուլուբաբյանի, Սուրեն Զոլյանի, Լենդրուշ Խուրշուդյանի, Յուրի Բարսեղովի, Խիկար Բարսեղյանի, Նիկոլայ Հովհաննիսյանի, Հրայր Բալյանի, Տիգրան Թորոսյանի և շատ ու շատ ուրիշների ուսումնասիրությունները, գիտական հոդվածները, տարբեր կարգի հրապարակումները և այլն: Մանրամասնու-

թյամբ և բազմաթիվ համոզիչ փաստերով հիմնավորված ներկայացված են նաև Ադրբեջանի հակահայ քաղաքականության տարբեր դրսևորումները[4]:

Արդի կարևոր խնդիրներից մեկը թերևս առաջինը ազգամիջյան հարաբերությունների կարգավորումն է, փոխադարձ վստահության հաստատումը, որը կարևոր գրավականներից մեկն է բնականոն կյանքին վերադառնալու համար: Այդ ուղղությամբ էլ շնորհակալ գործ է կատարել ճանաչված հետազոտող, անգլիացի լրագրող Թոմաս դե Վաալը, որը հրատարակել է մի ծավալուն աշխատանք՝ հայ-ադրբեջանական, ԼՂ հակամարտությունների վերաբերյալ[5]: Ուստի մեր օրերի հարցերի հարցը թերևս ազգային հարաբերությունների և հիմնախնդիրների կարգավորման հարցն է. պետք է ամեն ինչ անել, որ դադարեցվեն ազգամիջյան կռիվները, իսկ խնդիրների լուծման համար տարբեր երկրների քաղաքական ղեկավարները նստեն կլոր սեղանի շուրջ և փորձեն միայն քաղաքական ճանապարհով լուծել բոլոր անլուծելի թվացող հարցերը: Դրա համար պետք է կիրառել օրենքի ուժ, այն իրականացնել պետական մակարդակներով, համատեղ աշխատանքով, հանդուրժողական ազգամիջյան համաձայնության և փոխզիջման պատրաստակամության մթնոլորտում: Հակառակ դեպքում, այդ հակամարտությունները հընթացս կարող են ավելի ու ավելի խորանալ. առայժմ մասնակի, փոքրածավալ պատերազմները, ընդհարումները, միմյանցից պատանդներ տանելու ապրելաձևը, ժողովրդատեղահանությունը, ըստ ազգային պատկանելության տեղաշարժերը, տասնյակհազարավոր նոր գաղթականների հայտնվելը երկրի տարբեր տարածաշրջաններում, նույնիսկ այլ երկրներ մեկնելը և այլն կարող են հանգեցնել մի այնպիսի պատերազմի, որից դուրս գալը անչափ դժվար է և կարող է լինել է՛լ ավելի ծանր: Այսպիսով, ամենևին չհավակնելով գույները խտացնել, պետք է ասել, որ մեր օրերում ազգամիջյան հարաբերությունները բավական լարված են, իսկ առանձին տեղերում դրանք վերածվել են տարբեր աստիճանի բախումների և պատերազմների: Նման պայմաններում ինչպե՞ս վարվել, ինչպե՞ս լուծել առ այսօր շարունակվող այդ մեծ հակամարտությունը:

Իհարկե, ամեն ինչում և բոլոր մեղքերը բարդել նախկին Խորհրդային Միության վրա և բավարարվել դրանով՝ ամենևին հարցի լուծում չէ, և կարծել, թե դրանից հետո հակամարտություններ չեն լինի՝ առավել ևս միամտություն է: Ուստի մեզ թվում է, որ այսօր փորձել ազգամիջյան հիմնախնդիրները լուծել միայն մեկ տարածաշրջանում կամ նույնիսկ մի քանիսում, որոնք այսօր ավելի տաք կետեր են համարվում՝ Արցախ, Օսիա,

---

[4] **Դավիթավյան Տ.,** *Ադրբեջանի հատուկ ծառայությունները և դրանց հակահայ գործունեությունը (20-րդ դարի վերջ և 21-րդ դարի սկիզբ), թեկն. ատենախոս. սեղմագիր, Ե., 2016:*

[5] *Ավելի մանրամասն տե՛ս* **Де Ваал Т.** *Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, М., 2014:*

Աբխազիա, Մոլդովա, Ուկրաինա-Ղրիմ, Կենտրոնական Ասիա և այլն, այնքան էլ հեռանկարային չէ: Հետևաբար, այդ հարցի լուծումը պահանջում է համընդհանուր մոտեցում և համընդհանուր սկզբունքների կիրառում՝ հաշվի առնելով տվյալ հարցի լուծման համար թե՛ պատմական մոտեցումը, ճշմարտությունը, թե՛ տվյալ տարածքում ապրող ժողովրդի, ազգի ցանկությունը: Մինչդեռ վերոհիշյալ գործոնները նախկին Խորհրդային Միությունում երբեք հաշվի չեն առնվել, երբեք որևէ վիճելի հարց ազգերի, հանրապետությունների միջև չեն լուծվել ժողովրդավարական սկզբունքով, անհրաժեշտության դեպքում՝ հանրաքվեով: Եվ եթե Խորհրդային Միության տարիներին ամենից շատ գրվում, խոսվում և քարոզվում էր ժողովուրդների բարեկամության մասին, ապա մեր օրերում լույս են տեսնում նույնիսկ այնպիսի աշխատություններ, որոնք ունեն այլ բովանդակություն, այլ ուղղվածություն: Նրանցում փորձ է արվում տեսնել, փնտրել, թե ովքեր են թշնամի և ինչու: Այդպիսի մի հետազոտություն է կատարել ռուսական ծագում ունեցող, այժմ Լոնդոնի էկոնոմիկայի դպրոցի դասախոս Դոմինիկ Լիվենը, որը բավական մեծածավալ (680 էջ) աշխատանք է հրատարակել[6], որտեղ ավելի շատ քննարկում է այն թշնամանքը, որ տածել են Բրիտանական, Ավստրո-Հունգարական, Թուրքական, Ռուսական կայսրությունները միմյանց նկատմամբ:

Մեր օրերում խորհելու տեղիք է տալիս, թե ինչու ոչ միայն կայսրությունները, որոնք վաղուց այդ ձևով այլևս չկան, այլև շատ պետություններ, եթե ոչ ժողովուրդներ, մեղմ ասած, նույնպես թշնամական մոտեցում ունեն միմյանց նկատմամբ: Այդ երևույթը առավել վտանգավոր է դառնում, երբ անթաքույց նման դիրքորոշում են ցուցաբերում Ադրբեջանի ներկա իշխանությունները, հատկապես նրա առաջնորդ Իլհամ Ալիևը հայ ժողովրդի, Արցախի հայության նկատմամբ՝ այդ ճանապարհին դիմելով անչափ մերժելի, անընդունելի քայլերի:

Այսօր աշխարհում ապրում են 2000-ից ավելի ազգեր, ժողովուրդներ, որոնց 90%-ից ավելին ապրում է բազմազգ երկրներում: Բնականաբար, ժողովուրդների, բոլոր ազգերի վաղվա օրը ոչ թե առճակատումն է, թշնամանքը, անհանդուրժողականությունը կամ պատերազմներն են, այլ ավելի շատ համերաշխությունը, կողք կողքի ապրելու ունակությունը: Անառարկելի է նաև, որ նման փոխզիջման և փոխհամաձայնության գալու գործում անչափ մեծ է պետությունների, քաղաքական կուսակցությունների, մտավորականության դերը, որոնք կոչված են ավելի շատ պետությունների, տարբեր ազգերի միջև ստեղծելու ճիշտ փոխհարաբերություններ և վիճելի հարցերը լուծել քաղաքական ճանապարհով, խորապես գիտակցելով, որ մյուս ճանապարհները տանում են փակուղի:

---

[6] Ավելի մանրամասն տե՛ս **Ливен Д.** *Российская империя и ее враги с XVI века до наших дней, М., 2007:*

Հենց այդպիսի երկընտրանքի առաջ է կանգնած նաև մեր ազգը, նաև նման վիճակում հայտնված մյուս ազգերը: Ո՞ր ուղին ընտրել՝ հարցերի լուծման առճակատման ուղի՞ն, որը պատերազմ, ավերածություններ, արյունահեղություն է ենթադրում, թե՞ քաղաքական, փոխզիջման և փոխըմբռնման ճանապարհը:

Անշուշտ, նախընտրելին վերջին ճանապարհն է, այն բխում է ժողովուրդների շահերից: Այդ ուղիների ընտրության հետևում կանգնած են որոշակի քաղաքական ուժեր: Ժողովուրդների ցանկությունն է, որ այդ ուժերը սթափ, զգաստ և իրապես գնահատեն իրենց յուրաքանչյուր քայլը և ամեն ինչ անեն հակամարտությունը քաղաքական ճանապարհով լուծելու համար: Դա կլինի մարդասիրական քայլ և կբխի ժողովուրդների շահերից: Եվ մյուսը, որը նույնպես նշեցինք, չի կարելի մտածել, որ ազգամիջյան կոնֆլիկտների մի օջախը մարելով, ինչ-որ չափով լուծելով, կարելի է կարծել թե արդեն վերացվեց հիմնախնդիրը: Կարծում ենք, որ արդեն նման ընդգրկում և սահմաններ ունեցող այդ խճճված, լուծում չունեցող համարվող հարցը կարելի է լուծել համատեղ ջանքերով, կամեցողության դեպքում՝ նաև բոլոր տարածաշրջաններում:

Եվ այսօր, երբ հայ-ադրբեջանական հակամարտությունը, արցախյան հիմնահարցը ավելի մեծ սրություն են ստացել, վերածվել այսպես կոչված "սողացող պատերազմի", կրկին համոզվում ենք՝ որքան էլ այն երկու ժողովուրդների շահերն է շոշափում, միևնույն է, խնդիրը պետք է և կարող է լուծվել նաև մյուս ժողովուրդների համատեղ ջանքերով, միջազգային հանրության օգնությամբ, մարդու իրավունքների միջազգային նորմերը հարգելու և ընդունելու պարագայում: Այդ իմաստով արցախյան հիմնախնդրի լուծումը վերը նշված հարթության վրա տեղափոխելու գործում պատկանում է դարերով հարևան երկու ժողովուրդներին՝ հայերին, ադրբեջանցիներին, և նրանց պետական-քաղաքական ղեկավարներին: Այսօր այլ ճանապարհ թերևս չկա: Դա մեկ անգամ ևս փաստեց 2016 թվականի ապրիլյան պատերազմը, իսկ հարցի քաղաքական ճանապարհով լուծումից կշահեն ոչ միայն երկու ժողովուրդները, այլև մյուս ազգերն ու ժողովուրդները, որոնց հարաբերությունները ոչ պակաս չափով նույնպես լարված են և կարիք ունեն արագ և խաղաղ կարգավորման:

МЕЖНАЦИОНАЛЬНЫЕ ОТНОШЕНИЯ В СОВРЕМЕННУЮ ЭПОХУ (1991-2008 ГГ.)

МАТИНЯН Л. В., АБРААМЯН Г. М.

Резюме

На сегодняшний день наиважнейшим вопросом является разрешение межнациональных проблем, нередко чреватых межэтническими убийствами и

кровопролитиями. При этом урегулирование подобных конфликтов должно осуществляться на государственном уровне, совместными усилиями стран, в атмосфере межнационального согласия и готовности уступить друг другу. В противном случае эти конфликты могут привести к непредсказуемым последствиям. Завтрашний день всех народов и наций – это не войны и противостояние, враждебность и непримиримость, которые испытывают друг к другу Британская, Австро-Венгерская, Турецкая и Российская державы, а мир и толерантность по отношению друг к другу.

INTERETHNIC RELATIONS IN THE MODERN PERIOD (1991-2008)

L. MATINYAN, H. ABRAHAMYAN

Abstract

The greatest issue of our days is, probably, the settlement of national relations and national problems, and all the possible must be implemented to stop ethnic killings, as well as bloodshed. And all mentioned must be done due to force of law, state levels, joint work, in the atmosphere of interethnic consent, tolerance towards each other and willingness to compromise. Otherwise, these conflicts can lead to unpredictable consequences.The future of peoples and all nations is not confrontation, war, hostility and intolerance, that spread British, Austro-Hungarian, Turkish and Russian empires against each other, but peace and tolerance towards each other.